ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Լեռնապատ համայնք, հասցե գ. Լեռնապատ, 27փ. 7/6

Հեռախոս՝ 0322 68781
Էլ.Փոստ՝ Lernapat..lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 19 » նոյեմբերի 2015 թվականի N 38-Ա

<<ՀԱՅԱՍՏԱՆ>> ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ 2015Թ. ՄԱՐԱԹՈՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետով, հաշվի առնելով Լոռու մարզպետի 15.09.2015թ.-ի թիվ 200/09-01 գրությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

Լեռնապատ համայնքի ավագանին որոշում է.

Համաձայնություն տալ համայնքի ղեկավարին մասնակցելու <<Մարաթոն-դրամահավաք 2015 >> միջոցառմանը և հիմնադրամին փոխանցել 20/քսան/ հազ դրամ գումար:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲԱՋՅԱՆ ԱՐԿԱԴԻ
2. ԹՈՐՈՍՅԱՆ ԱՐԱՅԻԿ
3. ՍԵՐՅՈԳԻՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
4. ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԻԲԵԿ ԱԲԱՋՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Լեռնապատ համայնք, հասցե գ. Լեռնապատ, 27փ. 7/6

Հեռախոս՝ 0322 68781
Էլ.Փոստ՝ Lernapat..lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 19 » նոյեմբերի 2015 թվականի N 39-Ա

ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <ՏԻՄ> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 29-րդ կետով՝ Լեռնապատ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Լեռնապատ համայնքի սեփականության ամենամյա գույքագրումը հետևյալ ձևով.

Գյուղապետարան՝ ա. հիմնական միջոցներ 151 716 100 դրամ
բ. մանրարժեք գույք 1 582 661 դրամ

Մանկապարտեզ՝ ա. հիմնական միջոցներ 2 940 589 դրամ
բ. մանրարժեք գույք 141 655 դրամ

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲԱՋՅԱՆ ԱՐԿԱԴԻ
2. ԹՈՐՈՍՅԱՆ ԱՐԱՅԻԿ
3. ՍԵՐՅՈԳԻՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
4. ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԻԲԵԿ ԱԲԱՋՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լեռնապատ, (0322)68781, lernapat.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 նոյեմբերի 2015թվականի N 40-Ն

ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16 հոդվածի 1-ին մասի 3 կետով, <<ՀՀ բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածով և <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 70-րդ հոդվածով՝

Լեռնապատ համայնքի ավագանին որոշում է.

Լեռնապատ համայնքի ավագանու 2015թ. օգոստոսի 26-ի << Լեռնապատ համայնքի 2015թ.-ի բյուջեում փոփոխություն կատարելու մասին>> N29-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ և շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն 2-6 հատվածների/հավելված/:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲԱՋՅԱՆ ԱՐԿԱԴԻ
2. ԹՈՐՈՍՅԱՆ ԱՐԱՅԻԿ
3. ՍԵՐՅՈԳԻՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
4. ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԻԲԵԿ ԱԲԱՋՅԱՆ

Հավելված

Լեռնապատ համայնքի ավագանու

19.11.2015թ.-ի N40-Ն որոշման

ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

1. 07/3/1 բաժին/խումբ/դաս-ում կատարել հետևյալ փոփոխությունը՝

4266 հոդվածից 300,0 հազ դրամ տեղափոխել 4637 հոդված:

2. պահուստային ֆոնդից 300,0 հազ դրամ տեղախոխել 10/7/1 բաժին/խումբ/դաս-ի հոդված 4729-ը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԱԲԱՋՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լեռնապատ, (0322)68781, lernapat.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2015թվականի N 41-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ և համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 11 -ի «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Լեռնապատ համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին» թիվ 61-Ա որոշմամբ, հիմք ընդունելով ստացված դիմումները, սոցիալապես անապահով խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները

Լեռնապատ համայնքի ավագանին որոշում է.

1 .Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն կից հավելվածի:
2. Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ սույն որոշման կատարման ուղղությամբ և որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲԱՋՅԱՆ ԱՐԿԱԴԻ
2. ԹՈՐՈՍՅԱՆ ԱՐԱՅԻԿ
3. ՍԵՐՅՈԳԻՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
4. ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԻԲԵԿ ԱԲԱՋՅԱՆ

Հավելված

ՀՀ Լոռու մարզի

Լեռնապատ համայնքի ավագանու

2015 թվականի նոյեմբերի 19-ի N41 -Ա որոշման

ՑՈՒՑԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1. Գևորգյան Սիրարփի Սերգոյի	25/քսանհինգ/ հազ
2. Ղարաղաշյան Մարինե Ալբերտի	35/երեսունհինգ/ հազ
3. Մկրտչյան Լյուդմիլա Բարիսի	30/երեսուն/ հազ
4. Խառատյան Անժիկ Հովիկի	30/երեսուն/ հազ
5. Անանյան Նարինե Ալիկի	35/երեսունհինգ/ հազ
6. Գալստյան Վարսենիկ Հովհաննեսի	25/քսանհինգ/ հազ
7. Մելքոնյան Ազգանուշ Ռուբենի	25/քսանհինգ/ հազ
8. Ղազարյան Միեր Ղազարի	30/երեսուն/ հազ
9. Աշրաֆյան Զելֆիրա Հովսեփի	25/քսանհինգ/ հազ
10. Խաչատրյան Զինա Վլադիմիրի	30/երեսուն/ հազ
11. Թամարյան Ռոման Ռոբերտի	35/երեսունհինգ/ հազ
12. Խաչատրյան Թամար Շավարշի	25/քսանհինգ/ հազ
13. Պեպանյան Անյուտա Զալիկոյի	30/երեսուն/ հազ
ընդհամենը՝	380/երեք հարյուր ութսուն/ հազ

Համայնքի ղեկավար՝ Ս. Աբազյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լեռնապատ, (0322)68781, lernapat.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2015թվականի Ն 42-Ա

ՌՈՄԱՆ ԷԴԻԿԻ ԱԲԱԶՅԱՆԻՆ ԱՌԱՆՁԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Լեռնապատ համայնքի բնակիչ՝ Ռոման Էդիկի Աբազյանի դիմումը և համայնքի ղեկավարի առաջարկությունը և ղեկավարվելով <<ՏԻՄ >> ՀՀ օրենքի 16 հոդվածի 7-րդ կետի դրույթներով

Համայնքի ավագանին որոշում է.

Թույլատրել համայնքի ղեկավարին Ռոման Էդիկի Աբազյանին համարելու առանձին տնտեսություն :

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲԱԶՅԱՆ ԱՐԿԱԴԻ
2. ԹՈՐՈՍՅԱՆ ԱՐԱՅԻԿ
3. ՍԵՐՅՈԳԻՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
4. ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԻԲԵԿ ԱԲԱԶՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Լեռնապատ համայնք, հասցե գ. Լեռնապատ 27փ. 7/6
հեռախոս 0322 68781, էլ. փոստ Lernapat.Lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 19 » նոյեմբերի 2015 թվականի N44 -Ն

ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԳԱՆՁՎՈՂ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 19-ր կետով,<<Տեղական տուրքերի և վճարների մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածով `

Լեռնապատ գյուղական համայնքի ավագանին որոշում է.

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատ գյուղական համայնքի կողմից 2016թ.-ի համար մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների հետևյալ միասնական դրույքաչափերը՝

Տեղեկանք----------երեք հարյուր դրամ/ թուրյլատրել չգանձելու բնակչության որոշակի անապահով խավից/

Լիազորագիր----------հազար դրամ

Բնութագիր----------հազար դրամ

Անասունների տեղեկանք---------հինգ հարյուր դրամ

Մանկապարտեզի օրավարձ-------հարյուր դրամ

Հողի քաղվածքի և հատակագծի փաստաթղթեր----հինգ հազար դրամ

Հասցե տրամադրել---------- հազար դրամ

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲԱԶՅԱՆ ԱՐԿԱԴԻ
2. ԹՈՐՈՍՅԱՆ ԱՐԱՅԻԿ
3. ՍԵՐՅՈԳԻՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
4. ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

Լեռնապատ համայնքի ղեկավար՝ Ս. Աբազյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Լեռնապատ համայնք, հասցե գ. Լեռնապատ 27փ. 7/6
հեռախոս 0322 68781, էլ. փոստ Lernapat.Lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 19 » նոյեմբերի 2015 թվականի N43 -Ն

ՀՀ ԼՄ ԼԵՌՆԱՊԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով,<<Տեղական տուրքերի և վճարների մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածներով և <<Իրավական ակտերի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Լեռնապատ գյուղական համայնքի ավագանին որոշում է.

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատ գյուղական համայնքում 2016թ.-ի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲԱԶՅԱՆ ԱՐԿԱԴԻ
2. ԹՈՐՈՍՅԱՆ ԱՐԱՅԻԿ
3. ՍԵՐՅՈԳԻՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
4. ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

Լեռնապատ համայնքի ղեկավար՝ _____ Ս. Աբազյան
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

Հավելված

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի

Լեռնապատ գյուղական համայնքի ավագանու

նոյեմբերի 19-ի 2015 թվականի թիվ N43-Ն որոշման

ՀՀ ԼՄ ԼԵՌՆԱՊԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝

1)հիմնական օբյեկտների համար՝

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ մինչև 15 000 դրամ.

բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 15000 դրամ,

501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 15000 դրամ,

1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 25000 դրամ.

3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 50000 դրամ.

2) ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

ա) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 1500 դրամ,

բ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 2500 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում տեղական տուրքը սահմանել՝ շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության

օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ մինչև 1500 դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շնքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել մինչև 2500 դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանել՝

1) ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 6000 դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 6000 դրամ:

3) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար յուրաքանչյուր եռամսյակի համար՝

հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝3000 դրամ,

ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝1000 դրամ:

5. Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ 350 դրամ.

2) հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150 000 դրամ:

3) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի *թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝30 000 դրամ:*

6. Համայնքի տարածքում թանկարժ մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի *թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝*

50 000 դրամ:

7.Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

1) առևտրի օբյեկտների համար՝ 25 000դրամ.

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50 000 դրամ.

3) բաղնիքների (սաունաների) համար՝ 200 000դրամ.

4) խաղատների կազմակերպման համար՝ 500 000 դրամ.

5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250 000 դրամ.

6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100 000 դրամ:

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանել՝

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ.

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 դրամ.

3) այլ արտաքին գովազդի համար՝ 500 դրամ.

4) դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ:

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանելէ 10 000 դրամ:

10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 5 000 դրամ:

11. Համայնքի տարածքում շինարարական կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու ավարտած շինության շահագործումը փաստագրելու համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման տեղական վճար սահմանել՝ 5000 դրամ:

12. Համայնքի տարածքում տեղական ինքնակառավարման մարմնի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման տեղական վճար սահմանել՝ 5000 դրամ:

13. Համայնքի տարածքում տեղական ինքնակառավարման մարմնի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից տեղական վճար սահմանել՝ 1000 դրամ:

14.ՀՀ համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝ 50000 դրամ:

Համայնքի ղեկավար՝ Ս. Աբազյան

19 նոյեմբերի 2015թ.